ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» սեպտեմբերի 2011թ. N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Միքայելյան փողոցի հ.3 շենքի հ.80 բնակարանի Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 07.06.2011թ. հ.2752011 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ալլա Նուբարովային և Սարգիս Նուբարովին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միքայելյան փողոցի հ.3 շենքի հ.80 բնակարանը հանդիսացել է քաղաքացիներ Ալլա Սերգեյի Նուբարովայի (ամուսնական ազգանունը՝ Ալեքսանյան), նրա հոր՝ Սերգեյ Հայկի Նուբարովի և վերջինիս կնոջ՝ Քնքուշ Գուրգենի Միքաելյանի համատեղ սեփականությունը: Սերգեյ Նուբարովը մահացել է 1997թ. հոկտեմբերի 19-ին և վերը նշված բնակարանի նրան պատկանող բաժնեմասը ժառանգաբար փոխանցվել է վերջինիս կնոջը և աղջկան, որի արդյունքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժնման կողմից գրանցվել է Քնքուշ Միքաելյանի և Ալլա Ալեքսանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2009թ. ապրիլի 20-ին Քնքուշ Միքաելյանը մահացել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184 հոդվածի համաձայն, ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց, իսկ 1185 հոդվածի համաձայն ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանած այլ դեպքերում:

Տվյալ դեպքում, Քնքուշ Միքաելյանը չունի ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգներ:

Ալլա Նուբարովան, որը Քնքուշ Միքաելյանի հանգուցյալ ամուսնու դուստրն է, օրենքով սահմանված 6-ամսյա ժամկետում դիմել է ժառանգության ընդունման համար, սակայն նոտարի կողմից մերժվել է, քանի որ բացակայում է նրա և ժառանգատուի ազգակցական կապը հաստատող որևէ ապացույց, հետևաբար Միքայելյան փողոցի հ.3 շենքի հ.80 բնակարանի Քնքուշ Միքաելյանին պատկանող բաժնեմասը հանդիսացել է անժառանգ գույք, որի նկատմամբ Երևան համայնքը ձեռք է բերել սեփականության իրավունք (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 07.06.2011թ. հ.2752011 վկայականը):

Հաշվի առնելով, որ Միքայելյան փողոցի հ.3 շենքի հ.80 բնակարանի մյուս 1/2 բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում Ալլա Նուբարովան «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ